

համար աներագելի էին անշուշտ, մանաւանդ այսպիսի դարս մը մէջ :

Մնակեան թռւականը պէտք է գնել 360 կամ աւելի առաջ, քանի որ կորինի համեստ, արգէն Վառաշապուհի թագաւորութեան հինգերորդ տարին (397) քանի մը տարիներէ ի վեր արգունիքի մէջ կը գտնուէր « սպասաւոր արքայատուր հրամանին » եւ սուրբ Սահակի հետ խորհրդակից ըլլալու եւ միաբանութեամբ գործելու ասափճան ազգեցութիւն ձեռք բերած էր, որ հազիւ թէ կարևոր ըլլայ կրեսուն տարեկանէն առաջ :

Ուրեմն Մնան Ներսէսի մահուան տարին (378) գոնէ 12 տարեկան պատասի էր, եթէ ոչ աւելի, ուստի ինքնին անհաւանականութիւն չկայ Խորենացիի աւանդածին մէջ թէ Մաշտոց

աշակերտած ըլլայ առ ոսս Մեծն Ներսէսի, մանաւանդ որ Մաշտոցի գաւառը՝ Տարօն՝ Ներսէսի « ձեռական իշխանութիւնն » տակ գտնուող գաւառներէն մէկն էր, եւ մանուկ Մաշտոցի ուշիմութիւնը զիւրաւ կրնար եկեղեցիներու, վկայանուցներու եւ գպրոցներու խրախուսիչ Ներսէսի ուշագրութիւնը իր վրայ գարձուցած ըլլալ, բայց Կորինի Կողմէ անյիշատակ թողուած ըլլալը կասկածելի կ'ընէ այս յետնագրին աւանդութիւնը, զի Կորին ոչ միայն իրը աշակերա Մաշտոցի, այլ իրը մտերիմ իրոնէ երիցազոյն աշակերտակիցներու, հարկ էր որ լսած ըլլար Մաշտոցի ուսած ըլլալը մնանուն ներսէւ :

(Ծարունակիելի)

Գ. ՓԱՌԻՆԱԿ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ֆարմանի Ասմանի

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ե Ց

Ձեռների ՄԱՐԱԼԻ

Դուստր բազաւորին շահիշապնուրինն փոխեց զիւրակն եւ զիւրակն եւ երեկ մօս առ ֆարմանն զաղուան եւ հազուս բազաւորակն եւ կերակուր ցնուց ի ցեղաց :

Լըսեց նա ըլլացիուն Ֆարմանն մանկան, իշնդաց ւ ասաց՝ բարոյ աւելուիք հասան, Ահա(1) իմ սրտիս կամքըն կասարեցսն : Երթամ մօս յիշնքն որ է հոգուս հոգեճարն :

Զուգեց քաղցր ուստելիք ու ցեղք ւ ի ցնդաց, ծաքրով զնա համեմեց նման(2) թագուորաց :

(1) Ձեռ. մէջ՝ անայ :

(2) Զեռագրին մէջ՝ նմայ :

Առնու ի յընկերացն եւ հետ իւր փորձած, Սուրաթով գեղեցիկ, իմիկար ի խելաց :

Առնու հետ իւր ոսկի եւ ակունք անգին(fol.58vo)
Մարգարիտ լուսատու եւ խիստ մնագին,
Հալաւ թագւորական(1) հետ իւր վերուցին,
Երթայ մօս առ Ֆարմանն ի մէջ զիւրին :

Քոն զիր ամէն ընկերքն իշնքն առաջ երթար, ի կերպ Կորիմ մանկան որ մարդ չիմանար . Ֆայր ի գուռն մանկան եւ զարնէր ճարտար, Փորձէր եւ մեսանէր թէ ի մօսն ո'վ կար :

Մանուկըն Փայլիփառ ճայնէ՝ Այդ ո'վ է . Ասէ թէ՝ Մեծ արքայն զմարմանն կոչէ . Ասէ՝ Մէջ զիւրելիս մանկակին ի քուն է . Ասէ՝ Չայն առուր մանկանց, խիստ պիտանի է ,

Երթայ ճայն առաջ մանկանն, ասէ թէ՝ դարթիր, Ղըրկել է թագաւորին քեզիկ իշնդիր . Ասէ՝ Ո'վ կայ ի գուռն, մէկ ե'լ ու հարցի՛ր, Կամ ի՞նչ յիսնէ կ'ուզէ՝ զպատճան իմացիր :

(1) Զեռագրին մէջ՝ բազիութիւն :

Երթայ մանուկն ի դուռն ըգնա(1) հարցանէ ,
Նա(2) ի սովորքն ճարտար ի ներքս մշտանէ .
Երթայ մօտ առ ֆարման մանուկն եւ պատմէ ,
Արեկ առ թաղաւորն , ըզբեզ կու կոչէ :

Նայ ոսն եկաց ֆարման ի նա(2) ակնարկէ ,
Ետես զինք հանց սուրաթ որ անըմանն է ,
(fol.59) Լուսին արեգակնապէս շառափղել է .
Եւ ի մէջ զիշերին առ իս արևն կու ծագէ :

Ասէ՝ Տիւէք քարամ եւ լութիւն յատապ ,
Որ ի մէջ զիշերիս ծագեցին հայպաթ ,
Էր ես ի խոր քուն պէտուման դայխար ,
Նա(2) խօսեցաւ ընդ իս շիրին շաքար լապ :

Ասէ՝ Քեզի համար շատ վանց բռ(3) սիրուդ
Ելայ առ քեզ եկի վանց բռ կարօսուդ(4)
Զիմ հոգիս մի՛ զատել այլ ի բռ հոգուդ(5)
Աչերս լուս չունի առանց բռ տեսուդ(6) :

Մանկան առջեւ բերին զինչ որ զուգած էր ,
Ետես իրը գեղեցիկ որ այլ տեսեալ չէր ,
Քաղցրահամ կերպաւուր անուշանոտ էր ,
Գունովն էր գեղեցիկ համըն շաքար էր :

Երեր ակոնք անզին լուսատու ծոնար ,
Մարգարիտ գեղեցիկ եւ զգեստը պայծառ ,
Հզկեստ արքայական եւ մարգարտաշար ,
Ռոկով էր զարդարած եւ նախշ եւ նիկար :

Զեռօքըն իւր հագուց զմանուկն ֆարման ,
Սիրով սըրտի երկուսն հետ իրար նըստան .

(1) Զեռագ, մէջ՝ լզնայ . (2) Զեռաղբ, մէջ՝ նայ .
(3) Զեռ մէջ՝ նոյ . (4) Զեռ մէջ՝ կարօսն .
(5) Զեռ, մէջ՝ նոզու . (6) Զեռ, մէջ՝ տեսուն :

Զանուշա(fol.59v)համշաքարն հետիրար կերան .
Ապա քաղցրը խօսօք նորա(1) առաջ գան :

Ֆարման մանուկն ասէ՝ Քան շաքար քաղցր ես ,
Ապա դու զանը եղար ինձ անդիմաննես :
Թէ քո գալդ ի յիս մօտ դու մէն զիտակ ես ,
Հս զար բարի գալուդ(2) , դուն իմ հոգին ես ,

Ասաց՝ Ռւրախ կեցիր , սիրուդ ինչ կու վախէ ,
Թէ զմեզ մարդ իմանայ՝ այդ քեզ խայալ է .

Այս մէկ պահն որ աչերս ըզքեզ տեսանէ .

Այլ զինչ որ օմք ունիմ այս պահուս զինչ չէ :

Այս պահն ուրախ կեցիր որ ես առ քեզ եմ .
Վանց եմ սըրտիս համար որ զեզեզ կու սիրում .

Այսօր է ինձ ինդուն հոգին խօսեալ եմ :

Որ այսօր իմ հոգուն հոգին խօսեալ եմ :

Նըստան ուրախութեամբ ըզքեզերն ի բուն ,
Մինչ նըչանակ եղեւ այն առաւօտուն .

Ելաւ ի գուրս ետես թէ ո՛վ կայ արթուն .

Ասաց գընալ աղջկան մինչ լուս չէ՝ ի առն :

Ասէ՝ Դեռ ես կարօս եմ ի բռ սիրուդ(3)

Այլ հօքը լինի(fol.60v)որ ես համնիմ քո տեսուդ(4) .

Ասէ՝ Պատրաստ կեցիր վանց բռ արեւուդ(5) ,

ի բռ հօրէն վախեմ , ճանպահն է ահուս :

Դասանյա գաղտուկ ի տուն որ մարդ չիմանայ
Աւուրք մի՛ համերէ սըրտին ասպառ տայ .

Այլի՞ ի հոգս ընկնի ի մեծ անտիշահ ,

Թէ ոնց գընումբ ճարակ որ հետ մի այլ զայ ,

(Ճարունակելի)

(1) Զեռագ, մէջ՝ լզնայ . (2) Զեռաղբ, մէջ՝ նայ .

(3) Զեռ մէջ՝ նոյ . (4) Զեռ մէջ՝ կարօսն .

(5) Զեռ, մէջ՝ նոզու . (6) Զեռ, մէջ՝ տեսուն :

